

մերտ. Կ'ըսէ՝ « Ինքն շնորհ եղեցին հունտն է. աղէկն ի շնորհաց զայ. . . Ասէ »
 « Սահակ բժիշկն (1)՝ Թէ օգտէ ամենայն թանձր պաղլամին »: Դարձեալ գրէ, Թէ
 « Սեւուկ հունդ-մն է, և բողկի հունդ կու նմանի. և մանր այլ կու լինի և խոյր
 » այլ կու լինի. լաւն այն է որ նոր լինի... Ասէ Պատէհին, Թէ Ապրանն և Պսու-
 » նայն կու ասեն. և պարսկերէն Պրինկ Գապիլի կ'ասեն. և ինքն երկու ցեղ է,
 » մեծ և փոքր. լաւն այն է որ փոքր լինայ, և գունն կարմիր կու զարնէ... Ըզ-
 » ճիճին սպունելու համար՝ իսկի զեղ այսոր նման չկայ... Եւ այլ ասացած է Թէ
 » Դանքին է ո, Բինպիլ, الجاني. այս անծանօթ բոյս մ'է Եւրոպացւոց, բայց
 կարծեն իրենց Mallotus philippensis կոչածը. իսկ մեր Ամիրա. Դ գրին շաւակին
 մէջ կ'ըսէ, Քաքանաձն է, Alkekengi. վերոյգրեալ Պրինկն ալ հոմանիշ կամ հո-
 մացեղ է Քաքանաձն,

ՀԱՅՔ ԵՒ ԴԻՑԱՐԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Տես յէջ 287)

ՀԱՅԱՐԱՆՈՐ գաղթականութեանց կեդրոն եղող այս գօտին՝ կրկին
 աշխարհաց կը բաժնուի. « Մեծ » և « Փոքր Հայք ». որոց առանձինն բա-
 ժանմունքն, Նահանգներն և սոցա գաւառներն մի առ մի յիշելն աւելորդ
 կը համարիմք աստէն. մեծամեծ և հոյակապ գրիչներ այդ պէսքն լրացուցած
 ըլլալով արդէն իսկ 'ի վաղուց:

Այս կրկին աշխարհաց ժողովրդոց վարուց՝ բարուց սովորութեանց, արուես-
 տից, քաղաքականութեան աստիճանին, կրօնից և պաշտամանց, մտաւոր
 աշխուժի և գործունեայ կենաց միայ գաղափար ստանալու համար, եթէ
 բացարձակապէս զրական փաստաբանութիւնը պակասէին, և չլլայար մէկն որ
 խօսէր, և ո՛ր և է արտաքին օժանդակութիւն չկարենայինք գտնել, միթէ
 իբր բնական փաստ և հաստատուն նեցուկ չէի՞նք կարող յառաջ բերել այս
 կեդրոնէ ճառագայթող Գաղութներու՝ (Տիրսիներանց, Քաղզէացւոց, Իրա-
 նեանց, Հնդկի-Արեաց, և այլն,) նկարագիրն, նոյնպէս սահմանակցաց և
 զրացի ազգացն:

Քննեմք մի առ մի. — Լիւդիոյ Տիրսիներանց Հայոց աշխարհէ պան-

1. Հրեայ բժիշկ մ'է, Ապու Եաքուպ պէն Սօլէյման էլ-Իլըպիլի մականուանեալ, թ դարու
 կիսուն ծնած և դար մի ապրած է. շատ բան գրած է, որոց ոմանց բնագիրն կ'իմայ չի գը-
 րուիր, այլ լատին թարգմանութիւնն:

դիտելով հետերնին հեռուոր վայրեր տարած են բնածին և տեղական յարկին գաղափարներն և մշակութիւնքն : E. Reclus, (Nouv. géogr. univ. p. 346) Տիրսենեան շինութեանց վրայ խօսելով՝ կ'ըսէ : — Les villes, du moins, sont faciles à défendre, grâce à la prévoyance de leurs anciens constructeurs, Etrusques... qui prirent soin de leur donner pour piédestaux des terrasses artificielles au niveau des plus hautes eaux d'inondation ». Արդեօք բարեխնական աշտա-
րակաշինութեան պատմութեան գաղափարին ծնունդ տուողք Հայք չեն, — Ch. Casati (Fortis etrusc., Acad. des Semor. 11 fevr. 1888) կը յարէ. « Si les noms de famille existent en Italie, depuis près de deux mille ans, c'est qu'ils ont passé des Etrusques aux Romains... La constitution de la famille romaine, comme celle de la propriété romaine, est d'origine étrusque... Ահա հռոմէական ահագին բարձրութեան հիմունքն նիւթապէս և բարդապէս հայկական գաղութի մը, Տիրսենեան հատուածին վրայ հաստատուած. նիւթական և բարդական չէնք և էութիւնք՝ Հայոց Գաղութէ կը բխեն և կ'արբուցանեն զՀռոմ : — J. Martha (L'archéol. étr. et rom. p. 44) լերանց և գետոց վրայ խօսելով կը յաւելու. « 'ի վաղուց իսկ էտրուսկեանք (Տիրսեն. » նեանք) գետերը կը սանձահարէին թումբերով, ամբարտակներով, առուներ » կը բանային ամենայն աղողակութեամբ, լեռներն կը ծակէին ջրոց բն. » թացքն պարզելով, աւազաններ և ջրարբիք կը պատրաստէին ամենայն » զիրութեամբ » : — Անտարակոյս առ այդ կրթութիւն և փորձ և դիւրութիւն կը պահանջուէր, սակայն ո՛չ ապաքէն գաղափարն և ունակութիւնն իրենց հետ աւարած էին Մայր կեդրոնէն :

Տիրսենեան գաղութի վաճառականութեանց և արուեստից և ձեռագործ-ներու նկարագիրն թող տամք որ M. Fontane իւր լեզուան մեզ պարզէ. (Rome, p. 30, 31, 32, 33) « L'Etrurie trafiquera des fers d'Aethalie (Aethalie), des cuivres de Voloterrae et de Campanie, de l'argent de Populonia et de l'ambre de Baltique... L'industrialisme étrusque triomphe dans le travail des métaux, les bracelets de fer, les flèches ornées, les boucles de ceinturons, et même des vases aux parties très habilement soudées, frappent l'attention. Les fibules, spécialement ouvragées s'enrichissent et s'alourdissent d'ornements bizarres, grotesques, contournés. C'est une nouvelle manière... Les objets étrusques sont les rosaces, les palmettes, les lotus, les sphinx, les griffons, les taureaux ailés, réminiscences de Babylone, de Chaldée, ou retour par *atavisme aux choses de l'Assyrie*. Les poteries noires en relief, les pierres gravées,... les bronzes étrusques, *impressionnés d'asiatisme d'abord*, l'ouvrier s'hellénise ; à ce point, qu'au temps

de Périclès, les lampes, les plats, les statues de bronze, venus d'Etrurie sont appréciés à Athènes. — Եւ միթէ նոյն տուրեառիկ փոփոխումն եւ պէտք եղածն եւ յիշեալ նիւթք եւ մետաղք կը պակասէին իրենց բնաշխարհին մէջ: Կամբիւլոյ արծաթախառն հատքէն արծաթ կը հանէին, Կ'ըսէ A. Maury (La terre, p. 215) Եւրոպայի համար: Իրենց բնաշխարհն « ունի երկաթ քաջ » (Խորեն. աշխարհգր. էջ 29—30), եւ (Երկիրն) « սերմանեալ զքառասուն օրն հասանէ եւ բերէ ընդ միոյ յիսուն » (Անգ. Գ. 4), « Երկաթահանք Աղձնեաց » եւ « Զոր երկաթահատաց », (Բուգ. Գ. 10): « Երկաթահատք եւ Կապարահատք » եւ այլն: Եւ Formaleon (Mer Noire, p. 145) 'ի Խաղտիս պատուական երկաթի եւ արծաթի հանք կը յիշատակէ: « Պղնձահանք » (Կիրակոս), « Ոսկեհատք » (Ղ. Փարպ. թուղթ), եւ այլն, եւ այլն. իսկ ճանապարհաց դիրութիւնք են այն « չորս գորեզ գետերն », Եփրատ յարեմուտս, Երասխ յարեւելս. Գայլ 'ի հարաւ, Զօրիս 'ի հիւսիս:

Այս ամենն անծանօթ չէր Հայ-արիական ժողովրդեան, եւ յայդ կրթեալ էին նախ զառաջինն փոքր 'ի շատէ գրեթէ ամեն Գաղուլթք, չեւ լքեալ իրենց բնիկ Հայրենին. Կ'աշխատէին այդ հանքաց մէջ եւ կը հատանէին երկաթ եւ կապար եւ արծաթ եւ ոսկի. եւ վասն զի տաժանելի է աշխատութիւնն՝ ապագայ ժամանակաց մէջ ըստ անել քաղաքականութեան՝ զխաւսարար յանցաւորաց պատշաճ դատելով սեփականեցին զայդ գործ: Զայս բացայայտէ Զենոր Գլակայ խօսքն, « Տրդատ Թաքաւոր զյիշատակ առաքելոցն տօնել հրամայէր. եւ ազատէր զորս 'ի բանտի եւ 'ի մետաղս էին »: Ասկից ծագումն ունի եւ « քրէական յանցանք » բացատրութիւնն, իբր « քուրացական » 'ի բոլիս դատապարտելի:

Քարահատից համար Դիոդոր Սիկիլիացոյ պատմածն կը յիշեմք (Հոր. Ա. էջ 125). « Շամիրա՛ քար կտրել տուաւ Հայոց լեռներէն, հարիւր երեսուն ստնաշափ երկայն, քսան եւ հինգ լայն եւ թանձր, եւ շատ մը եզներով մինչեւ Եփրատ գետ բերել տալով՝ սայլերով մինչեւ Բաբելոն տարաւ, եւ կոթող տնկեց մեծ ճամբուն վրայ »: — Եւթն հրաշալեաց մին:

M. Fontane Տիրսքենեանց (Եւրոպայի) սեպհական տարազն կը քաղէ քանդակներէ. (Rome, p. 33): L'époux est le maître, il a son parasol, son bâton de commandement, son siège d'apparat, et sa trompette d'appel; il porte la robe longue des Assyriens, couverte de fleurs brodées, avec une bordure d'un ton vif; les sandales chaussant ses pieds sont lydiennes; le capuchon couvrant son chef est phrygien. L'homme et la femme parés, se chargent d'ornements, bijoux énormes de poids, nombreux, de types variés: diadèmes, pendants d'oreilles, colliers, tressens couvrant la poitrine entièrement, venant battre les hanches. L'enfant orné de même, porte la « bulle », bijoux spécial, ca-

racteristique des Etrusques, véritable amulette, et qui sera réservée, plus tard, à Rome, aux triomphateurs ». Մերս հինուորաց ազգային ազանելիք և զգեստը ո՛րչափ նման են և մանաւանդ ուրեք ուրեք բառական ճշգրտեամբ իսկ՝ յիշեալ Գաղութին։ Ինչ որ Տիւրքերենում Գաղութի այրն կը գործածէ՝ նոյնն հայ-արիականն աշխարհիկ և մեհենական ազանելի ըրած է, իշխանութեան գաւազանն, աշխարհատեսն և կրօնուպետին հաւատացուած։ Զրմաց շեփորքն և փորածոյ զաւարափողք, ընդարձակ վերարկուքն, ասղնեգործեալ հանդերձքն, մարգարտայեռ հողաթափքն, զըլ-խալիր վեղարն, օսկէգինդքն, զանկապանքն, և սղայոյ սեփական հմայական պահարաններն, գրութիւնք և կղարթք. որոց մի մասն այժմ իսկ հայ եկեղեցի հնութեան մեհենաներէ ընդունած և պահած է։ Աւելի ընդարձակօրէն պիտի տեսնեմք զայս Դիցաբանութեանս մէջ։ Հարեանցի յիշատակեմք խորենացոյ և մի քանի ազգային սղաց աւանդն այս մասամբ։ « Մրբրս » ոսկոյ և արծաթոյ և քաշաւնց պատուականաց, և զգետտոց և պէսպէս » գռնեոց և անկոռափոց, արանց հասակաց (հասարակաց, առ հասարակ) և » կանանց միանգամայն » (խորեն. Պտմ. Հայ. Ա. 24)։ « Եւ ՚ի գլուխ » ազասաց կանանց հինգ հարիւր թազս երևելիս » (Վարդան)։ « Եւ թա » գաւորն տանել թազ և պատմունճան և զվառ թագաւորացն Տիկնոջն Զար » մանդիտոյ » (Բուզանդ. Ե. 38), եւ այլն։

Իսկ կրօնական պաշտամանց զաղափարն նախկին և բնածինն էր Տիւրքերնեանց մէջ, գրեթէ անփոփոխ պահուած։ Որոյ համար J. Martha (L'Archéol. étr. et Rom. p. 30) կ'ըսէ, « Seuls, de tous les peuples méditerranéens, les Etrusques cultivaient l'art oriental de la divination ». Գուշակք, հմայք, գէտք, որոց զիստութիւն և ճարտարութիւն աստեղային զիստութեանց վրայ յեցեալ էր աւելի, և որով Քաղդիք (Խաղտիք) համաշխարհիկ անուն ստացած են և համբաւ, կը տեսնեմք որ Տիւրքերեան զաղութէն անծանօթ մնացած չէ այդ հմայական գուշակութիւն, և հմայական գիրն (bulle)։ Եւ այս ահագին հեռաւորութեամբ Միջագետաց հարան գրաւօղ Քաղդէական ազգին հետ իտայական Տիւրքերեանց ունեցած նմանութիւնն՝ անշուշտ իրարու փոխանցած պէտք է հաւատամք Մայր կեղրոնին մէջ, չե զաղթականութեամբ բաժնուին յիրերաց։ — Հետեւաբար Տիւրքերեան և Քաղդեան զաղութներու ծնողն՝ եթէ ծնօղ ևս չըսեմք Գուշակութեանց, Հմայութեանց և Գիտութեանց, գէթ անմասն և անհաղորդ չեմք կրնար համարիլ յայդցանէ։ Իիտելի է Մոգ բառն և Մոկաց աշխարհն և պետն, և սահմանքն։ Հմայք և Հմայեակ անունն հայ. Անգեղաւունն, և այլն. յորս հմայութեանց և մոգական արուեստին հմտութիւնն կը փայլի։

Լուկրետիոս (De Rer. nat. l. VI, p. 125) Եւրոպական կրօնական գաղափարն կը բացատրէ. « Ամեհաներոս անծանօթ կամաց » կը վերբերեն՝ կ'ըսէ, ամեն բան։ « Այս Ամմահից անծանօթ կամիչ » երբեմն ՚ի թոխս հաւուց՝ և երբեմն զկնի ժամանակաց ստորնանալով մինչև իսկ կենդանական

փորստեաց մէջ սկսաւ որոնուիլ : Ի սոցանէ՝ Հոռմայեցեաց անցաւ Հարցուկ Հաւահմայոցքիսն :

Մահն անցք մ'էր երկու կենաց մէջ Տիրսեանեան գաղափարաւ, ուստի ննջեցեալք մեծահանգիւս կը յուղարկուէին : — Այս Բնիկ-Ալիսատանի սեպ-հական եղականութիւնն է, ընդ ծնունդն և ընդ մահ առատարակ խնդութիւն և հանդէս. կը ծնանի՝ մեծ հանդէսներ կը լինին, կը փոխի՝ նոյնչափ և քուցէ աւելի ճոխ հանդէսներով յռդի կը դնեն : Յռչարկ. դէպ 'ի ո՞ւր. — Դէպ 'ի « յԱնմահից անծանօթ կամք » : — Այս սոյն երեղոյթ մինչև ցայսօր 'ի մեզ 'ի Հայս կ'երեւի, ինչպէս պիտի տեսնեմք 'ի Դիցաբանութեան՝ Հայ Քրիստոնեայ եկեղեցի ամեն բան 'ի Հայ Մեհենից հնութեան քան՝ ձարանէն անփոփոխ ընդունած և անփոփոխ պահած է. արդ այսօր Հայ Եկեղեցի Ննջեցեալ յուղարկաւորութեան ժամանակ « Սպիտակազգեստ » լինել կ'աւանդէ, սպիտակ Շապիկ (Դպրաց) և սպիտակ շուրջառ, « անմահութեան » յիշատակ, Նորեւոկ սուրբոյթն՝ այդ անմահութեան օրինակն խաւարաթոյր զիշերով մը պատած է. սովայն այդ հայերէն չէ, օրինաւոր չէ, և ստրուկ ծառայականութիւն : Տօնացոյցն սպիտակ պատառակալ կը հրամայէ « Աւազ ուրբաթու » Քրիստոսի մահուան յիշատակ : (Տես Դիցաբանութեան մասն) :

Եւրոպական լեզուին վրայ հետաքրքրական է գիտել M. Fontaneի հետեւեալն. (Rome). — « Les Romains qualifieront la langue des Etrusques de « barbare », que leur alphabet parlé « ne distinguait pas », le b du p, le c du g, le d du t. Գուցէ այս ալ մեր այժմեան հայերենի նկարագիրն, ո՞ր գիտէ քանիցս աղաւաղած, բառ առ բառ, անառ առ տառ :

Շարայարեկ

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՄՆ

ՅԵՐԵՐԱՊԵՏ

(Տես յ'էջ 231)

ՅՈՒԼԻՈՍ Հենրիկ Պետերմանն ծնած է ի Էլախաւ յամի 1801 յ'12 օգոստոսի : Նախ սեմական լեզուաց ուսմամբ պարագեցաւ, և 1829էն ի վեր հրատարակած էր գրուածք մը Քաղզէական Հնգամատենին կրկին թարգմանութեանց վրայ : 1832ին Բրուսելոյ կառավարութիւնը զրկեց զինքն ի Ս. Ղազար՝ Թուրք և հայ լեզուները սորվելու. և զաս կ'առնուր ի Հ. Եւրոպոյ վարդապետէ Հիւրմիւզ, զոր կը կոչէ mein innigst verehrter